

Դ Ա Ս Ի Պ Լ Ա Ն

Դաս՝ համակարգչային տեխնիկայի կիրառմամբ

Ուսուցիչ՝

Ամսաթիվը՝

Առարկան՝ մաթեմատիկա

Դասարանը՝ 2-րդ

Դասի թեման՝ «Անհայտ նվազելի գտնելը»

Դասի բնույթը՝ նոր նյութի հաղորդման դաս

Դասի նպատակը՝

կրկնել՝ որոնք են միանիշ և երկնիշ թվերը, գումարման և հանման գործողությունների բաղադրիչները, անհայտ գումարելի գտնելու կանոնը:

ներկայացնել տարբերության և հանելի միջոցով նվազելի գտնելու կանոնը,

ձևավորել պարզ խնդիրներ լուծելիս նվազելի գտնելու կանոնը կիրառելու կարողություններ և հմտություններ,

խթանել սովորողների ինքնուրույն մտածողությունը, մեծացնել հետաքրքրությունն առարկայի նկատմամբ:

Սովորողի ուսումնական ակնկալիքները՝

Տարբերի հանման գործողության բաղադրիչները, գտնի նվազելի տարբերության և հանելի միջոցով:

Կիրառի կանոնը վարժություններ և պարզ խնդիրներ լուծելիս:

Դասի կառավորումը՝

համակարգիչ, պրոյեկտոր և մեծ էկրան:

Դասի ընթացքը.

1. Բանավոր հարցում (մտքի մարզանք)
2. Նոր նյութի հաղորդում

3. Առաջադրանքների կատարում

1

4. Դասի ամփոփում և գնահատում

5. Տնային աշխատանքի հանձնարարում

Դ Ա Ս Ի Ը Ն Թ Ա Ց Ք Ի Ն Կ Ա Ր Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ը

1. ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑՈՒՄ (ՄՏՔԻ ՄԱՐՁԱՆՔ)

Խթանում

Մտածողությունն ու հիշողությունը ակտիվացնելու, մտապահված տեղեկույթը վերաբառադրելու, պատճառահետևանքային կապերը բացահայտելու նպատակով՝ անցկացնել բանավոր հարցում՝ տալ հետևյալ հարցերը.

Որո՞նք են միանիւթ թվերը:

Ո՞րն է ամենափոքր միանիւթ թիվը:

Անվանե՛ք ամենամեծ միանիւթ թիվը:

Որո՞նք են երկնիւթ թվերը:

Անվանե՛ք ամենափոքր երկնիւթ թիվը:

Ո՞րն է ամենամեծ երկնիւթ թիվը:

Անվանե՛ք գումարման գործողության բաղադրիչները:

Ինչպե՞ս գտնել անհայտ գումարելիին:

Անվանե՛ք հանման գործողության բաղադրիչները:

Գտե՛ք ամենափոքր երկնիւթ և ամենամեծ միանիւթ թվերի տարբերությունը:

2. ՆՈՐ ՆՅՈՒԹԻ ՀԱՂՈՐԴՈՒՄ

Իմաստի ընկալում

Նոր նյութի հաղորդումը կարող է ուղեկցվել սլայդների ցուցադրումով: Այն կարող է սկսվել հետևյալ

2

հանձնարարության կատարումով.

Վերականգնի՛ր հավասարումները.

$$\square - 7 = 52 \quad \square - 6 = 71$$

$$63 = \square - 4 \quad 95 = \square - 2$$

2

Ցուցադրվում է տարբերության և հանելիի միջոցով նվազելի գտնելու կանոնի ձևակերպումը, բերվում է համապատասխան օրինակ, կատարվում է ստուգում:


3. ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

Կտարատում

Էկրանին հերթով ցուցադրվում են առաջադրանքներն ու խնդիրները, դրանք լուծվում են, հետո ներկայացվում են լուծումները, և սովորողները դրանք գրառում են իրենց տետրերում: Առաջադրանքները հետևյալն են.

Առաջադրանք 1.

Գտի՛ր նվազելին:

$$\boxed{47} - 6 = 41 \quad 35 = \boxed{39} - 4$$
$$\boxed{87} - 2 = 85 \quad 45 = \boxed{45} - 0$$


© 2019 Վերականգնողական կենտրոն. Գրքեր

Խնդիր 1.

3

Ձևակերպի՛ր հարցը և լուծի՛ր խնդիրը:

ԽՆԴԻՐ 1

Երբ տակառից վերցրին **4** լ ջուր,
այնտեղ մնաց **52** լ ջուր: Քանի՞ ... :

Խնդիր 2.

ԽՆԴԻՐ 2


4 կգ խնձոր վերցնելուց հետո
զամբյուղում մնաց **15 կգ**: Որքա՞ն
խնձոր կար զամբյուղում:

Խնդիր 3.

ԽՆԴԻՐ 3

Երբ Անին կարդաց գրքի **7 էջը**, նրան
մնաց կարդալու ևս **61 էջ**: Քանի՞ էջ
ունեւ գիրքը:

Առաջադրանք .



4. ԴԱՍԻ ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Կատարել անդրադարձ, հարցերի միջոցով ընդհանրացնել և ամփոփել դասը:

Անցնել գնահատմանը: Գնահատելիս հաշվի առնել, թե ով ավելի լավ ընկալեց նոր նյութը, ցուցաբերեց ակտիվ մասնակցություն:

Դասամատյանում գնահատել 5-6 սովորողի:

5. ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒՄ

ԴԱՍ 28. Կատարել N^o 168 ա, 170 բ, 171 բ առաջադրանքները:

Գրականություն.

1. Սոկրատ Մկրտչյան, Արամ Աբրահամյան, Սուրեն Իսկանդարյան «ՄԱԹԵՄԱՏԻԿԱ 2», «Զանգակ» հրատարակչություն, ԵՖԵՎԱՆ 2017
2. Սոկրատ Մկրտչյան, Արամ Աբրահամյան, Սուրեն Իսկանդարյան «Մաթեմատիկա. ուսուցչի ձեռնարկ՝ 2-4-րդ դասարաններ», «Զանգակ» հրատարակչություն, ԵՖԵՎԱՆ 2013

3. Դասի ժամանակ կարելի է օգտագործել հետևյալ սահիկառարը՝
<https://lib.armedu.am/resource/20527>